# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 7 - 8 (16708) ՇԱԲԱԹ 26 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է ՎՐԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԾԵԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ»

### ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ



*Ինչպես արդեն հաղորդել ենք, հունվարի 22-25-ը շվեյցարական Դավոս քաղաքում անցկացվեց համաշխարհային տնտեսական ֆորում, որի աշխատանքին մասնակցեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն: Այցի շրջանակներում, կառավարության ղեկավարն անցկացրեց մի շարք հանդիպումներ համաժողովին մասնակից պետությունների ղեկավարների հետ: Մասնավորապես, Մամուկա Բախտաձեն հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:*

Հանդես գալով ֆորումի շրջանակներում անցկացված «Եվրասիան համաշխարհային գլոբալ ենթատեքստում» հանդիպմանը՝ Մամուկա Բախտաձեն նշեց, որ իր գլխավորած կառավարության ռազմավարությունն է Վրաստանը վերածել բիզնեսի, առեւտրի, ֆինանսների, զբոսաշրջության ու կրթության տարածաշրջանային կենտրոնի: Նա ներկաների ուշ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՅԱՑԱԿԱՄ Է»

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին նախագահի կարգավիճակում իր առաջին աշխատանքային այցը կատարեց Բրյուսել, որտեղ հանդիպումներ ունեցավ Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի պաշտոնատար անձանց հետ:*




Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ եվրակոմիսար Յոհաննես Հանի, եվրահանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յուն-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## «ՎՐԱՍՏԱՆԸ ԿՊԱՀՊԱՆԻ ՌԴ-ԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԶԻ ՏԱՐԱՆՑՈՐԴԻ ԴԵՐԸ»

Հունվարի 18-ին Վրաստանի կառավարության նիստին նախորդած մամլո ասուլիսում վարչապետ Մամուկա Բախտաձեն, պատասխանելով լրագրողի հարցին, թե վերանայվելո՞ւ է արդյոք Ռուսաստանից Վրաստանի տարածքով Հայաստանին գազի մատակարարման վերաբերյալ ռուսական «Գազպրոմ» ընկերության հետ կնքված տարանցման համաձայնագիրը, որի ժամկետը լրացել է 2018 թվականի դեկտեմբերի 31-ին, հայտարարեց, որ Վրաստանը չի պատրաստվում հրաժարվել Ռուսաստանից Հայաստանին գազի մատակարարման տարանցորդի դերից:

- Վրաստանը բավական զգալի օգուտ է ստանում տարանցման գործառույթից, եւ մենք կշարունակենք այն կատարել: Դա համապատասխանում է մեր երկրի շահերին: Ինչ վերաբերում է համաձայնագրին, ապա դրա շուրջ «Գազպրոմ»-ի հետ բանակցությունները կսկսվեն այն ժամանակ, երբ կորոշվի կոնկրետ ամսաթիվը եւ կնշանակվի հանդիպումը,- ասել է վարչապետը:

Նա նշել է, որ առայժմ նման բանակցություններ նշանակված չեն, «իսկ եթե պարտավորագրում հայտնվի ինչ-որ նոր բան, հասարակայնությանը կտեղեկացվի Վրաստանի էկոնոմիկայի նախարարության կողմից»:

Մինչեւ 2017 թվականի հունվարը Վրաստանը Ռուսաստանից Հայաստան գազի տարանցման դիմաց ստանում էր տարանցվող հումքի ընդհանուր ծավալի 10 տոկոսը: 2017 թվականի սկզբին «Գազպրոմ»-ի հետ ստորագրված նոր պայմանագրին համապատասխան, 2017 թվականին ռուսական կողմը այդ տարանցման համար Վրաստանին վճարում էր փողով եւ մասամբ հումքով, իսկ 2018 թվականին՝ միայն ֆինանսական միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆ

## ԴԱՎՈՍ. ԿԱՅԱՑԱՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ-ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Հունվարի 22-ին շվեյցարական Դավոս քաղաքում կայացավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը:*




Գրեթե մեկուկես ժամ տեւած հանդիպմանը կողմերը մտքեր փոխանակեցին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի ընթացիկ իրավիճակի եւ հետագա քննարկումների մասին: Այդ մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում նշել է Հայաստանի վարչապետը. «Դավոսում ոչ պաշտոնական հանդիպում ունեցա Իլհամ Ալիեւի հետ»:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱԿԵՐՊՎԵՑ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հունվարի 14-ին ստորագրել էր Նիկոլ Փաշինյանին Հայաստանի վարչապետ նշանակելու հրամանագիրը: Հունվարի 19-ին նախագահը ստորագրեց Հայաստանի կառավարության անդամների նշանակման եւ վերանշանակման հրամանագրերը:*

Արմեն Սարգսյանի հրամանագրերով **Զոհրաբ Մնացականյանը** վերանշանակվել է արտաքին գործերի նախարար, **Դավիթ Տոնոյանը**՝ պաշտպանության նախարար, **Արայիկ Հարությունյանը**՝ կրթության եւ գիտության նախարար, **Սուրեն Պապիկյանը**՝ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար, **Էրիկ Գրիգորյանը**՝ բնապահպանության նախարար, **Ֆելիքս Ցոլակյանը**՝ արտակարգ իրավիճակների նախարար, **Հակոբ Արշակյանը**՝ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար, **Տիգրան Խաչատրյանը**՝ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար, **Ատոմ Ջանջուղազյանը**՝ ֆինանսների նախարար, **Արսեն Թորոսյանը**՝ առողջապահության նախարար, **Արտակ Զեյնալյանը**՝ արդարադատության նախարար: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի պաշտոնում է նշանակվել **Զարուհի Բաթոյանը:**

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ԿԱՆԽԱԳԾՎԵԾԻՆ ԱՊԱԳԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

*Հունվարի 24-ին Թբիլիսիում կայացավ Վրաստանի պետական անվտանգության ծառայության ղեկավար Վախթանգ Գոմելաուրին հանդիպում ունեցավ իր հայ գործընկեր, Հայաստանի Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Արթուր Վանեցյանի հետ:*



Հանդիպմանը Վախթանգ Գոմելաուրին եւ Արթուր Վանեցյանը քննարկեցին տարածաշրջանային ներկա զարգացումները, երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Կողմերը քննարկեցին նաեւ երկու երկրների անվտանգության ծառայությունների միջեւ համագործակցության, տեղեկատվության եւ փորձի փոխանակման վերաբերյալ հարցեր:

Գործընկերային ջերմ մթնոլորտում կայացած հանդիպումը երկուստեք կարեւորվել է ու գնահատվել՝ որպես հարաբերությունների կայուն զարգացման, ապագային միտված ուղերձ:

Հանդիպմանը ներկա էին պետական անվտանգության ծառայության ղեկավարի տեղակալ Ալեքսանդրե Տաբատաձեն, վարչության ղեկավար Նինո Գիորգոբիանին եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է ՎՐԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԾԵԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ադրությունը բեւեռեց Եվրոպան եւ Ասիան միացնող ամենակարճ երթուղու ձեւավորման գործում Վրաստանի դերի վրա ու նշեց, որ տարեցտարի ավելանում է Վրաստանում ներդրումներ իրականացնող ընկերությունների թիվը:

- Եթե դիտենք քարտեզը, ապա Վրաստանը իրոք հավակնում է տարածաշրջանային կենտրոնի թեկնածությանը: Մենք ութ երկրների համար դարպաս ենք, որոնք չունեն ելք դեպի ծով: Ուստի, իմ գլխավորած կառավարության ռազմավարությունն է Վրաստանը վերածել տարածաշրջանային կենտրոնի: Մենք փորձում ենք իրականացնել բարեփոխումներ, որպեսզի է՛լ ավելի նշանակալի ներդրումներ կատարենք Վրաստանում: Մենք մեր երկիրը դիտում ենք՝ որպես կամուրջ Ասիայի եւ Եվրոպայի միջեւ: Մենք ցանկանում ենք նպաստել Ասիայի եւ Եվրոպայի միջեւ առեւտրական ապրանքաշրջանառության ավելացմանը: Այդ պատճառով նշանակալից ներդրումներ ենք իրականացնում մեր ենթակառուցվածքներում եւ այստեղ՝ Դավոսում, հաճելի է տեսնել, որ ավելանում է այն ընկերությունների թիվը, որոնք շահագրգռված են Վրաստանում կապիտալ ներդրումների իրականացմամբ,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:



Հանդիպմանը վարչապետը հիշեցրեց, որ Վրաստանը տարածաշրջանում միակ երկիրն է, որը ազատ առեւտրի պայմանագիր ունի ինչպես Եվրամիության երկրների, այնպես էլ՝ Չինաստանի հետ:

- Այստեղ առկա է համագործակցություն, ես Չինաստանն ու Եվրամիությունը չեմ ընկալում որպես երկու խոշոր մրցակից: Իհարկե, Վրաստանը երկիր է, որն ունի եվրոպական միտվածություն եւ կարող է նշանակալի վճռորոշ դեր կատարել այդ հարցի կարգավորման գործում,- ընդգծեց Մամուկա Բախտաձեն եւ հավելեց, որ Վրաստանը տնտեսական երկու խոշոր հարթակները միմյանց կապող կամուրջ է:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՅԱՑԱԿԱՄ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կերի, միգրացիայի հարցերով եվրակոմիսար Դմիտրի Ավրամոպուլոսի, եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով Եվրամիության բարձրագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի, եվրախորհրդարանականների հետ: Հյուսիսատլանտյան ալյանսի կենտրոնակայանում Վրաստանի նախագահը հանդիպեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ:

Հանրագումարելով Բրյուսելում կայացած հանդիպումները՝ Սալոմե Զուրաբիշվիլին հայտարարեց, որ Եվրամիությունը բարյացակամ է տրամադրված Վրաստանի նկատմամբ, եւ հանդիպումներում պատրաստակամություն հայտնվեց է՛լ ավելի խորացնել համագործակցությունն ու իրականացնել կոնկրետ քայլեր: Սալոմե Զուրաբիշվիլու խոսքով, Եվրամիության ներկայացուցիչների հետ հանդիպումներում դրական արձագանք եղավ անայցեգրային պայմանակարգի ընթացքի եւ դրա խորացման կապակցությամբ:



- Վավերացվեց այն փաստը, որ անայցեգրային պայմանակարգի ընդունումից հետո դրանից օգտվել է Վրաստանի ավելի քան 300 հազար քաղաքացի, դա դրական երեւույթ է, թեպետ նաեւ նշվեց, որ առկա են հիմնախնդիրներ՝ կապված Եվրամիության երկրներում ապաստարան ստանալու դիմումների հետ, սակայն դրանք առանձնակի չչեշտվեցին: Անայցեգրային պայմանակարգի դադարեցման վերաբերյալ ակնարկ անգամ չի եղել, թեպետ դա չի նշանակում, որ այդ ուղղությամբ մենք չպետք է աշխատենք,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին:

Վրաստանի նախագահի հայտարարությամբ, հանդիպումներում դրական գնահատվեց երկրի կառավարության քաղաքականությունը:

- Միաժամանակ, անհանգստություն արտահայտվեց փակված անցակետերի կապակցությամբ: Այդ առումով, պատրաստակամություն է հայտնվել, որ այդ թեման բարձրացվի Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերություններում, այն հաշվով, որպեսզի դա չընկալվի որպես կայացածի հետ հաշտեցման քաղաքականություն,- նշեց Սալոմե Զուրաբիշվիլին:

ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում կայացած հանդիպմանը Վրաստանի նախագահը կրկին ընդգծեց Հյուսիսատլանտյան ալյանսին Վրաստանի անդամակցության պատրաստակամությունը՝ նշելով, որ ՆԱՏՕ-ն նույնպես պատրաստ է ընդլայնել Վրաստանի հետ համագործակցության շրջանակները:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒՆ ՀԱՋՈՂՎԵՑ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔՈՒՄ» ԾԱԳԱԾ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



***Հունվարի 24-25-ը, «Վրացական երազանք -Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության կենտրոնակայանում, կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլու նախագահությամբ տեղի ունեցավ հանդիպում Վրաստանի խորհրդարանի մեծամասնության պատգամավորների հետ: Հանդիպմանը մասնակցեցին նաեւ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, գործադիր իշխանության այլ ներկայացուցիչներ:***

Հանդիպման անհրաժեշտությունը պայմանավորված էր վերջին ժամանակներում Վրաստանի Գերագույն դատարանի դատավորների ընտրության հարցում խորհրդարանական մեծամասնության շրջանում տարաձայնությունների առկայությամբ: Նշենք, որ դեռեւս տարեվերջին, վերոնշյալ հարցը դարձավ խորհրդարանի իրավաբանական կոմիտեի նախագահ Էկա Բեսելիայի՝ կոմիտեի ղեկավարի պաշտոնից հրաժարականի պատճառը:

Երկու օր շարունակվող խորհրդատվությունների ժամանակ, կուսակցության նախագահը, գործնական իրավիճակում կողմերի հետ քննարկեց աղմկահարույց հարց, կարողացավ դիմակայող կողմերի փոխզիջմամբ մշակել բոլորի կողմից ընդունելի տարբերակ:

Ինչպես հանդիպման ավարտից հետո հայտարարեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, «Վրացական երազանք» կուսակցությունում ընթանում է շատ առողջ գործընթաց, որի մասին կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին խոսել էր դեռեւս մի քանի ամիս առաջ: Նրա խոսքով, Բիձինա Իվանիշվիլուն հաջողվեց կարգավորել հարցի շուրջ ծագած լարվածությունը:

- Ինչ վերաբերում է դատարանին, ապա կառավարող քաղաքական կուսակցությունն այս հարցի շուրջ արդեն հանդես է եկել սկզբունքային որոշմամբ,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ պարտադիր պետք է գրվեն դատավորների ընտրության գործընթացները եւ օբյեկտիվ չափանիշները, որոնք համատեղելի պետք է լինեն համաշխարհային ու եվրոպական լավագույն փորձի հետ:

«Վրացական երազանք» խմբակցության ղեկավար Գիա Ժորժոլիանու հավաստմամբ, դատավորների ընտրության կարգի վերաբերյալ նոր օրենսդրական նախաձեռնություն է ներկայացվել:

- Դատավորների ընտրակարգը կփոխվի, սակայն դա չի նշանակում, որ թեկնածուները եւս կփոխվեն: Այս երկու հարցերը իրար հետ կապ չունեն,- հայտարարեց պատգամավորը՝ նշելով, որ առաջիկայում փոփոխություններ կկատարվեն նաեւ դատարանների մասին օրենքում:

- Քննարկվում է, թե ինչ չափանիշներով պետք է ընտրվեն Գերագույն դատարանի դատավորները: Չեմ կարող հստակ ասել, թե արդյոք վերջնական համաձայնություն կլինի՞: Քննարկումները կշարունակվեն, գործընթացը չի կարող ավարտվել այսօր, -ընդգծեց Գիա Ժորժոլիանին:



ՈՒԿՐԱԻՆԱ

### ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԵՌԱԿԱ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ Է

*Կիեւի դատարանը Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչին պետական դավաճանության գործով հեռակա կերպով դատապարտել է 13 տարվա ազատազրկման:*

*Ուժի մեջ է մնացել նախկին նախագահի կալվածքի առգրավման մասին որոշումը:*

*Վճիռը հայտարարվել է հեռակա կարգով, քանի որ Վիկտոր Յանուկովիչը 2014 թվականից գտնվում է արտերկրում:*

*Պետական դավաճանության վերաբերյալ նրա գործի քննությունն սկսվել է 2017 թվականի վերջից: Մեղադրող կողմը ի սկզբանե պահանջում էր նրան ցմահ ազատազրկել, սակայն ավելի ուշ պահանջել էր 15 տարվա ազատազրկում: Նշենք, որ ինքը՝ Յանուկովիչն իրեն մեղավոր չի համարում:*

ՎԵՆԵՍՈՒԵԼԱ

### ՆԻԿՈԼԱՍ ՄԱԴՈՒՐՈՅԻ ՓՈԽԱՐԵՆ, ՆԱԽԱԳԱՀ ԵՆ ՃԱՆԱՉՈՒՄ ԽՈՒԱՆ ԳՈՒԱՅԴՈՒՆ

*Հունվարի 23-ին Վենեսուելայի ընդդիմադիր Ազգային ասամբլեայի (միապալատ խորհրդարանի) խոսնակ Խուան Գուայդոն, չընդունելով անցյալ տարվա ամռանը կայացած ընտրությունների արդյունքները, ըստ որի նախագահ էր ընտրվել Նիկոլաս Մադուրոն, իրեն հայտարարեց երկրի նախագահի պաշտոնակատար: Քաղաքական գործչին արդեն Վենեսուելայի ժամանակավոր ղեկավար են ճանաչել ԱՄՆ-ը, Կանադան, Արգենտինան, Բրազիլիան, Չիլին, Կոլումբիան, Պարագվայը, Պերուն, այլ երկրներ, այդ թվում՝ Վրաստանը, ինչպես նաեւ Ամերիկյան պետությունների կազմակերպությունը: Նիկոլաս Մադուրոն դա որակել է Վաշինգտոնի կազմակերպած պետական հեղաշրջում, հայտարարել է ԱՄՆ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու մասին եւ ընդգծել, որ իր վարչակազմն ամեն գինով պաշտպանելու է երկրի ինքնիշխանությունը:*

*Նշենք, որ Նիկոլաս Մադուրային իր աջակցությունն է հայտնել Թուրքիայի նախագահ Էրդողանը:*

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

### ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՆ ՍԻՐԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

*Եվրամիությունն ընդլայնել է Սիրիայի դեմ սահմանված պատժամիջոցները՝ սեւ ցուցակին հավելելով 11 ֆիզիկական անձ եւ հինգ ընկերություն: Այդ մասին ասված է ԵՄ խորհրդի հայտարարության մեջ, որը հունվարի 21-ին տարածվել է Բրյուսելում հանրակցության 28 երկրների արտաքին գործերի նախարարների նիստի արդյունքների վերաբերյալ:*

*Այսպիսով, ինչպես պարզաբանում է ԵՄ խորհուրդը, Սիրիային վերաբերող սեւ ցուցակում ներառված են 270 մարդ եւ 72 կազմակերպություն, որոնց վրա տարածվում են ԵՄ երկրներ ուղեւորությունների արգելք եւ հանրակցության մեջ ակտիվների սառեցում՝ դրանց առկայության դեպքում: Սիրիայի դեմ ԵՄ պատժամիջոցների փաթեթը, որ հետեւողականորեն խստացվել է 2011-2014 թվականներին, առավել խոշորներից մեկն է հանրության պատմության մեջ: Այն գործնականում արգելում է եվրոպական բիզնեսի շփումները Սիրիայի հետ, հատկապես՝ նավթի ու նավթամթերքի առեւտրի ոլորտում:*

 Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

# «ԽԵԼԱՑԻ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐԸ» 4 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՈՒԳԱՆԵԼ ԵՆ 6 654 ՎԱՐՈՐԴԻ

*Այն ամենից հետո, երբ տեխզննում չանցած մեքենաների տուգանման պրոցեսին միացան նաեւ «Խելացի տեսախցիկները», ընդհանուր առմամբ, տուգանվել է 6 654 տեխզննում չանցած մեքենայի վարորդ:*



Հետազոտությունների եւ բարեփոխումների բաժնի պետ Բեքա Լիլուաշվիլու խոսքով, 2019 թվականի հունվարի 1-14-ը ճանապարհային ոստիկանության անձնակազմի կողմից տուգանվել է տեխզննում չանցած 2404 մեքենայի վարորդ:

Ըստ ներքին գործերի նախարարության տվյալների, «Խելացի տեսախցիկների» տուգանումներից հետո, ավելացել է տեխզննման կենտրոններ հաճախող վարորդների քանակը:

Հունվարի 14-ից «Խելացի տեսախցիկները» ավտոմատ ռեժիմով տուգանել են այն մեքենաների վարորդներին, որոնք չեն անցել պարտադիր տեխզննում: Առաջին անգամ տուգանումը ֆիզիկական անձանց համար՝ 50, իսկ իրավաբանական անձանց համար 200 լարի է:

Հիշեցնում ենք, որ 2019 թվականի հունվարից ավտոմեքենաների տեխզննումը պարտադիր է դարձել յուրաքանչյուր տեսակի տրանսպորտային միջոցի համար: Զննման արժեքը թեթեւ տեսակի ավտոտրանսպորտի համար 60, բեռնատար եւ մարդատար մեքենաների համար 100 լարի է:

Մինչեւ չորս տարեկան մեքենաները տեխզննում չեն անցնելու, 4-8 տարեկան մեքենաները զննում են անցնելու երկու տարին մեկ անգամ, իսկ 8 եւ ավելի տարեկան տրանսպորտային միջոցները տեխզննում են անցնելու ամեն տարի: Տեխզննում չեն անցնի այն մեքենաները, որոնք անսարքություն ունեն, անսարքությունն ուղղելու համար վարորդներին տրվում է մեկ ամիս ժամանակ: Կրկնակի զննումն անվճար է, սակայն, եթե վարորդը չուղղի խախտումները, կտուգանվի 50 լարիով:

Տեխզննումն իրականացվում է մեքենայի գրանցման օրվան համապատասխան: Օրինակ, եթե մեքենայի գրանցման վկայականը տրվել է 2013 թվականի նոյեմբերի 15-ին, տրանսպորտային միջոցը պետք է զննում անցնի մինչեւ 2019 թվականի նոյեմբերի 15-ը:

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունը, ավտոմեքենաների տեխզննման գործընթացը դյուրացնելու համար, ստեղծել է թեժ գիծ՝ 14 84 հեռախոսահամարով, օպերատորները կօգնեն, որպեսզի սեփականատերերն առցանց գրանցվեն եւ տեխզննման համար օր նշանակեն: Թեժ գիծն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը 10:00-18:00-ը: Ամբողջ Վրաստանում գործում է 40-46 կենտրոն:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

# ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎՏՈՏԵԽԶՆՆՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ



Տեխզննման կենտրոնների միության ղեկավար Վաժա Իորդանիշվիլու խոսքով, այդ հարցով աշխատում է հատուկ խումբ, որին ներգրավված են ցամաքային տրանսպորտի գործակալության, արտոնագրման կենտրոնի եւ ծառայությունների գործակալության ներկայացուցիչները:

Նախագիծը, որը նախատեսում է զննման գործընթացի պարզեցում, դուրս է բերվելու կառավարության նիստին:

Միության ղեկավարը կոչ է անում վարորդներին, օրենքով սահմանված ժամկետում դիմել զննման կենտրոններին, հակառակ դեպքում, նրանք կտուգանվեն:

Այս պահի դրությամբ, տեխզննում է անցել 50 հազար ավտոմեքենա, այստեղից մոտ 24 հազարի մոտ հայտնաբերվել են թերություններ:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ

# ՆՈՐ ՊՈՒՐԱԿ ԵՎ ԿԻՍԱՆԴՐԻ՝ ԲՈՒՂԱՇԵՆՈՒՄ

*Հունվարի 20-ին Ախալքալաքի մունիցիպալիտետի Բուղաշեն գյուղում տեղի ունեցավ տեղի բնակիչների նախաձեռնությամբ նորաբաց պուրակի եւ գյուղի հին դպրոցի բակից այստեղ տեղափոխված արցախյան պատերազմի ազատամարտիկ Միքայել Ավագյանի կիսանդրու բացման հանդիսավոր արարողությունը:*



Միջոցառմանը մասնակցեցին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանը, Սամվել Մանուկյանը, Ախալքալաքի քաղաքապետ Յուրի Ունանյանը, մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը: Այստեղ էին նաեւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

Բուղաշենում 8-ամյա դպրոցն ավարտելուց հետո, Միքայել Ավագյանը կրթությունը շարունակել է Հայաստանի Հրազդան քաղաքի տեխնիկական ուսումնարանում: Բանակից զորացրվելուց հետո, նա ընդունվել է Սվերդլովսկի ներքին գործերի ուսումնարան: 80-ական թվականներին աշխատել է Աբխազիայի Ինքնավար Հանրապետության ներքին գործերի մարմիններում: Այնուհետեւ, մշտական բնակություն է հաստատել Հայաստանի Սառնաղբյուր գյուղում:

Ղարաբաղյան պատերազմում զոհված հետախույզ Միքայել Ավագյանի կիսանդրու տեղադրումը եւ պուրակի կառուցումը իրականացվել է բուղաշենցի բարերար Գագիկ Ավագյանի ֆինանսավորմամբ:

Միքայել Ավագյանի որդին, դուստրն ու թոռը իջեցրին սպիտակ սավանը, բացեցին կիսանդրին եւ ծաղիկներ խորարհեցին:

ՈԼՈՐՏ

# ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ



*Վրաստանի կառավարության աշխատակազմը տարածել է հաղորդագրություն, ըստ որի, ՄԱԿ-ի համաշխարհային պարենի ու գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO), գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացման համար Վրաստանին կտրամադրի երկու միլիոն եվրո:*

Նախագծի շրջանակներում, նախատեսվում է Վրաստանում մշակել գյուղի զարգացման քաղաքականություն՝ բնական ռեսուրսների կայուն օգտագործում, գյուղատնտեսական փորձի զարգացում շրջակա միջավայրի հետ համատեղ եւ այլն:

Ծրագիրը, որը կիրականացվի ՄԱԿ-ի համաշխարհային պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության կողմից, ֆինանսավորում է Ավստրիայի զարգացման գործակալությունը (ADC):

Ծրագրի շրջանակներում, իրականացվող միջոցառումներն ուղղված են Վրաստանի ֆերմերների մրցունակության բարձրացմանը եւ գյուղատնտեսական արտադրության հետեւանքով կլիմայի փոփոխությունների նվազեցմանը:

FAO-ն ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունն է, որը ղեկավարում է սովի դեմ պայքարի միջազգային ջանքերը:

Կազմակերպության հիմնական նպատակն է ապահովել բոլորի պարենային անվտանգությունը եւ երաշխավորել բնակչությանը բարձրորակ սննդի պարբերական հասանելիությամբ: FAO-ն, որում հաշվառվում է ավելի քան 194 անդամ-պետություն, գործում է աշխարհի ավելի քան 130 երկրում:

# ՀՈՂԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ԹՈՒՅԼ ՏՎԵՑ ՏՆՏԵՍԵԼ 32 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

*Անվճար սպասարկումներից օգտվելու հնարավորություն ընձեռող բարեփոխման շրջանակներում իրականացվող հողամասերի գրանցումը, նախորդ տարվա տվյալներով, քաղաքացիներին թույլ տվեց տնտեսել 32 միլիոն լարի:*

Բարեփոխման շրջանակներում, հանրային գրանցման ազգային գործակալությունը հնարավոր բոլոր սպասարկումները ցուցաբերում է գրանցման գործընթացի իրականացման համար: Հանրային ռեեստրի տեղեկատվության համաձայն, քաղաքացիները դյուրությամբ կարող են ստանալ եւ կարգավորել գրանցման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, նոտարական վավերացում անցկացնել գործարքի կողմերի միջեւ, ձեւակերպել հողամասերի սեփականության ճանաչման իրավունքները, հողամասերի սեփականության իրավունքի նախնական վավերացումը, գրանցվող հողամասերի ճշգրտումը:

Բարեփոխման ընթացքում դյուրացված ընթացակարգերով գրանցվել է ավելի քան 600 հազար դիմում:

Նշենք, որ հողերի գրանցման բարեփոխումը կշարունակվի մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը:

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

# ԽՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

*Վերջին ժամանակներում, բնական գազի կենցաղային տեխնիկայի եւ գազի արտահոսքի թեման դարձել է ամենաշատ քննարկվող այն բանից հետո, երբ անցած շաբաթ Թբիլիսիի Դիդի Դիղոմիի թաղամասում, նորակառույց շենքի վեցերորդ հարկում, ուժեղ պայթյուն եղավ: Պայթյունի պատճառը գազի արտահոսքն ու կուտակումն է հանդիսացել: Միջադեպի հետեւանքով, չորս մարդ է զոհվել, այդ թվում՝ 4-ամյա երեխա: Իսկ նախօրեին, Թբիլիսիի մեկ այլ թաղամասում՝ Վարկեթիլիում, շմոլ գազի զոհ են դարձել երկու տարեց տղամարդ:*



Ելնելով թեմայի հրատապությունից՝ Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Նաթիա Թուրնավան հայտարարեց, որ գազիֆիկացումը առաջնահերթություններից մեկն է, սակայն, դա պետք է կատարվի անվտանգության կանոններին լիովին համապատասխան:

- Խորապես ցավում եմ գազի պայթյունի ու գազից թունավորման ողբերգական դեպքերից զոհվածների համար եւ հուսով եմ, որ ներքին գործերի նախարարության կողմից կատարվող քննությունը կպարզի ողբերգության պատճառները: Միեւնույն ժամանակ, մենք մտադիր ենք ուժեղացնել գազի օգտագործման անվտանգությունը եւ ներմուծել այդ ոլորտում լավագույն միջազգային փորձը,- նշեց փոխնախարարը:

Նրա խոսքով, հետագայում նախատեսվում է է'լ ավելի խստացնել՝ որակավորված ընկերությունների կողմից շինարարական եւ տեղադրման աշխատանքների անցկացման պահանջները:

Կխստացվեն նաեւ անհատական բնակտարածությունում բնական գազի ցանցի տեղադրման պահանջները, ինչպես նաեւ բնական գազի տեխնիկայի անվտանգ օգտագործման ստուգումները:

Տարվում է ակտիվ աշխատանք՝ կապված առկա կարգավորող բազայի վերանայման հետ, որը կփոխվի գործընթացի մեջ ներգրավված բոլոր կողմերի իրավունքների եւ լիազորությունների իրացման ու խստացման ուղղությամբ,- նշեց Նաթիա Թուրնավան եւ հավելեց.

- Բացի այդ, հանրությունը կշարունակի ակտիվորեն իրազեկվել բնական գազի անվտանգ օգտագործման վերաբերյալ:

Նշենք, որ պաշտոնական տվյալներով, 2016-2018 թվականներին միայն Վրաստանի մայրաքաղաքում բնական գազի արտահոսքի զոհ է դարձել 86 մարդ, իսկ 285-ը՝ թունավորվել են: Ընդհանուր առմամբ, 2018 թվականին գազի արտահոսքից մահացել է 27 մարդ, 98-ը՝ թունավորվել:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*